ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

« 16 » 03 202 3թ.
№ ԿՏԱԾ/2-371

«Հայկ-Մեկ» ՍՊԸ-ի(ՀՎՀՀ 00802088)
տնօրեն՝ Վ. Մարտիրոսյանին
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Շարուրի 37/5
հեռ.010 46 65 86
էլ. հասցե՝ haykmek@hotmail.com

ՀՀ պաշտպանության նախարարության և «Հայկ-Մեկ» ՍՊԸ-ի միջև 07.08.2021թ. կնքված N ՄԱԱՊՁԲ-22-4-2 գնման պայմանագրի (համաձայնագիր №2 առ 21.01.2022թ.) (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը ոչ ուշ քան 2022թ. նոյեմբերի 30-ը, ի թիվս այլ ապրանքների, պետք է մատակարարեր Պայմանագրի 5-րդ չափաբաժնով նախատեսված ընդհանուր 7000 հատ ապրանք: 10.01.2023թ. դրությամբ ընդհանուր քանակից 1240 հատը «Հայկ-Մեկ» ՍՊԸ-ի կողմից ընդհանրապես չի մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023թ. մարտի 15-ին Պայմանագրի նշված չափաբաժինը միակողմանի մասնակի լուծել է:

Տեղեկացնում եմ, որ «Հայկ-Մեկ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 558 003 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, որից 600 հատի մասով, 191 097 ՀՀ դրամի չափով տույժը հաշվարկված է մինչև 21.12.2022թ. ներառյալ, իսկ 640 հատի մասով 366 906 ՀՀ դրամի չափով տույժը հաշվարկված է մինչև 10.01.2023թ. ներառյալ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am